

Ավանտա նվեր քարտի պայմաններ

1. Նվեր Քարտը համարակալված պլաստիկ քարտ է՝ ֆիքսված գումարի պարունակությամբ, որի միջոցով հաճախորդը կարող է Ավանտա նորարարական բժշկության կենտրոնի էսթետիկ բժշկության մասնաճյուղերում օգտվել էսթետիկ բժշկության ծառայություններից և կատարել գնումներ տվյալ օրվա դրությամբ գործող գներով:
2. Նվեր Քարտը կարելի է ձեռք բերել Ավանտա նորարարական բժշկության կենտրոնի էսթետիկ բժշկության բոլոր մասնաճյուղերից՝ կատարելով նախընտրելի քարտի արժեքին համապատասխան վճարում:
3. Հնարավոր է ձեռք բերել 10000, 20000, 30000, 50000, 70000, 100000 և 200000 դրամ ֆիքսված գումարի պարունակությամբ նվեր քարտեր:
4. Նվեր Քարտը չի հանդիսանում ապրանք. այն վերադարձման և փոխանակման ենթակա չէ: Նվեր Քարտի անվանական արժեքը ենթակա չէ կանխիկացման. այն հնարավոր է օգտագործել միայն Ավանտա նորարարական բժշկության կենտրոնում՝ էսթետիկ բժշկության ծառայություններից օգտվելու և գնումներ կատարելու համար:
5. Նվեր Քարտը չունի վավերականության ժամկետ:
6. Ավանտա նորարարական բժշկության կենտրոնի մասնաճյուղերը իրավունք ունեն մերժել հաճախորդի՝ Նվեր Քարտի միջոցով գործարք կատարելու պահանջը միայն այն դեպքում, երբ ծրագրային խնդիրների պատճառով համակարգից օգտվելը անհնար է, կամ առկա են հիմքեր այն մասին, որ տվյալ Նվեր Քարտը օգտագործվում է անօրինական կարգով:
7. Նվեր քարտը օգտագործելու համար անհրաժեշտ է այն տրամադրել Ավանտա նորարարական բժշկության կենտրոնի էսթետիկ բժշկության ցանկացած մասնաճյուղի համապատասխան աշխատակցին: Նվեր քարտը տրամադրելիս դրան համարժեք գումարը համալրվում է ներկայացնողի անձնական հաշվին:
8. Ավանտա նորարարական բժշկության կենտրոնը իրավունք ունի կատարել փոփոխություններ սույն կանոններում. քարտի օգտագործման պայմանների փոփոխություններն ուժի մեջ են մտնում կայքում համապատասխան փոփոխությունների հրապարակման պահից մեկ ամիս հետո, և հավելյալ անհատական ծանուցումներ չեն ուղարկվում:
9. Ավանտա նորարարական բժշկության կենտրոնը տեղադրում է փոփոխությունների և դրանց ուժի մեջ մտնելու մասին տեղեկատվությունը իր պաշտոնական կայքում:
10. Հաճախորդը կարող է ստանալ տեղեկատվություն իր առկա գումարային մնացորդի վերաբերյալ Ավանտա նորարարական բժշկության կենտրոնի ընդունարանից կամ զանգահարելով 012 323232: